



ՄԵԾ ԵՂԵՈՆ

1915 - 1922 թուականներին, Օսմանեան կայսրութեան ամբողջ հայութիւնը բնաջինջ ըլլալով աքսորուեցաւ իր երկրէն: Եղան մէկ ու կէս միլիոն զոհեր: Արեւմտեան Հայաստանը հայաթափ եղաւ: Վերապրող հայութիւնը հայրենիքի թէ՛ Սփիւռքի մէջ չի մոռնար իր զոհերը եւ իր բնագրաւուած հողերը: Ան կը պահանջէ Յեղասպանութեան ճանաչում եւ արդար հատուցում:

Պահանջատեր հայութիւնը տերն է իր դատին:

ՄԵՆՔ ՅԱԿԵՐԺՈՒԹԵԱՆ ԾԱՌԸ ԵՂԱՆՔ

Տառապանքներ - հալածանքներ - մահեր տեսանք

պատառ մը հացի սիրոյն
պուտ մը երջանկութեան համար պայքարեցանք
կարօտներ - առանձնութիւններ
սերեր - անքուն գիշերներ
յուսախաբութիւններ տեսանք
դարերու հոսանքն ի վեր
դարերու հոսանքն ի վար նաւարկեցինք
փոթորիկները մեզ ճգմեցին ու անցան

1915



պատերազմներ
նահատակներ
մարտիրոսներ տեսանք
ցուրտ հողը մեր տաք արցունքով թրջեցինք
արհաւիրք
կեղեքում
հեծկտուք - թախիծ տեսանք
սեպ լեռներն ի վեր մազլցեցանք
մեր ապաւինած ժայռերը փուլ եկան
արիւնլուայ գլորեցանք

քաջասիրտ ռազմիկը - նազելաշուք Թամարը տեսանք
թմբուկին ձայնով գինովցանք
սրինգին շունչով վերացանք

խոցեր - կոծեր - բոցեր տեսանք
այրեցանք - փիւնիկ եղանք - վերակենդանացանք
արեւ եղանք -
մայրամուտին կարծեցին թէ մեռանք
արշալոյսով դարձեալ ծագեցանք

հնամենի վանք մը եղանք
ձիւնին տակ կորսուեցանք
ձիւնհալին դարձեալ ցոլացինք
անմահ երգ մը եղանք
կռունկի նման
ճախրեցինք հորիզոնէ հորիզոն

մշտադալար ծառ մը եղանք
սրտին մէջ երկրագունդին
մեր արմատները մխրճեցինք
եւ աշխարհի չորս ծագերուն
ծիածանի եօթը գոյներով
ծաղկեցանք երակ - երակ
ՄԵՆՔ ՅԱԿԵՐԺՈՒԹԵԱՆ ԾԱՌԸ ԵՂԱՆՔ

Իգևա Սարըասլան

ԹԻՒՄ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇԽԵՆԻ, ՇԱՀԻՆԻ,
ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐԻՇԵՆՆ

ԿԱՆՔ ՈՒ ԿԸ ՄՆԱՆՔ...

Դուք ձեր մրրիկով մեր Մարմինը թանկ՝
Հագար Տեր-Չօրի կլափին տուիք կե՛ր:
Բայց մե՛նք՝ Սասունցի Դաւիթ իբր անմեռ՝
Հագար ծագերեն կը ձայնենք.

-Ներկա՛յ...

Ձեր բորանին դեմ՝ մենք բո՛րք արեգակ,
Կա՛նք ու կը մնա՛նք աշխարհի վրայ:

Ձեր նենգին զենքով մեր Անունն անժանգ՝
Աշխարհի սիրտէն սրբե՛լ ճգնեցաք:

Բայց մե՛նք՝ յաւերժին մէջ քանդակուած Հա՛յկ՝
Պատմութեան էջէն կը թնդանք.

-Ներկա՛յ...

Ձեր չար ջանքին դեմ՝ մենք մե՛կ եւ կո՛ւռ կամք,
Կա՛նք ու կը մնա՛նք աշխարհի վրայ:

Ձեր ոխին կրակով դարձուցիք մոխի՛ր,
Չորս հովի՛ն տուիք մեր Գիրն ու Ոգին:

Բայց մենք՝ լուսասփիւռ Մեսրո՛պ լուսածին՝
Անցեալի ձորէն կը գոռանք.

-Ներկա՛յ...

Ձեր հրդեհին դեմ՝ ծովի՛ պէս անծիր,
Կա՛նք ու կը մնա՛նք աշխարհի վրայ:
Ձեր խօլ մոլուցքին անկուշտ մանգաղով
Մեր հոգւոյն հանդէպ Հաւատքն յօտեցիք:

-Ներկա՛յ...

Ձեր մանգաղին դեմ՝ մենք կաղնի՛ անխռով,
Կա՛նք ու կը մնա՛նք աշխարհի վրայ:

Ձեր խուժ խուժանին ժանիքներով ժանտ
Յօշեցի՛ք մեր Հողն անոյշ եւ կանաչ:

Բայց մե՛նք՝ դարեղէն Մասի՛ս աննուած՝
Գալիքի բարձրէն կ'որոտանք.

-Ներկա՛յ...

Ձեր ճանկերուն դեմ՝ մենք ժա՛յռ պողպատեայ,
Ձեր հեղեղին դեմ՝ մենք թո՛ւմբ անվտանգ,
Կա՛նք ու կը մնա՛նք աշխարհի վրայ...

Ժագ Յակոբեան



ՄԻ՛ ԸՍԵՐ

Սկսեցայ
Պայսակ
Բանբասանք
Փախեցայ

ԱՅԼ ԸՍԷ

Սկսայ
Պայուսակ
Բամբասանք
Փախայ

ԲԱԺՆԵՑԷ՛Ք ՀԵՏԵԻԵԱԼ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ ՎԱՐԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՄԷԶ:
Ծառ, ծաղիկ, թզենի, շուն, գայլ, որդ, ձուկ, սեր, ցաւ, ատելութիւն, կարօտ, վազք, լող,
շարժում, մեկնում, կին, բժիշկ, օդաչու:

Բոյս կամ պտուղ

Կենդանի

Չգացում

Գործողութիւն

Մարդ կամ էակ



Իսկա՛նք ինքնա՛նք
ինքնա՛նք ինքնա՛նք
իսկա՛նք ինքնա՛նք
իսկա՛նք ինքնա՛նք
իսկա՛նք ինքնա՛նք
ՎՈՐՈՎՈՒՄ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԻ ՀԱՅՐԸ ԱՐԱՄ ՆԱՅԱՊԵՏ

Երբ Արամ Նահապետ իշխանութիւն ստանձնեց, շրջակայ ցեղերը յաճախ կը յարձակէին Հայաստանի վրայ: Արամ՝ հայրենասէր մարդ, կը նախընտրէր մեռնիլ, քան հայրենիքը ոտնակոխ տեսնել: Ուստի, ան իր արիւնակիցներէն յիսուն հազար երիտասարդ հաւաքեց, անոնց վարժեցուց նիզակ գործածել, զանոնք վերածեց հմուտ նետաձիգներու ու քաջ ռազմիկներու, ապա ելաւ թշնամիներուն դէմ:

Հայաստանի սահմաններուն մօտ Արամ Նահապետ հանդիպեցաւ մարացի զօրագունդի մը, որուն առաջնորդն ու հրամանատարն էր Նիւբար անունով հպարտ եւ ռազմասէր մարդ մը: Նիւբար արդէն քանի մը անգամ ասպատակէր էր հայոց աշխարհը եւ իր ձիերու սմբակներուն տակ փճացուցէր էր հայոց բերքը եւ ամբողջ Հայաստանը երկու տարի իրեն ենթարկէր էր:

Արամ Նահապետ արդէն որոշած էր վերջ դնել մարերու շահատակութեան եւ հետեւաբար իր քաջերը յանկարծակիի բերին այս զօրախումբը արեւածագէն առաջ, Արամի գլխաւորութեամբ անսպասելի յարձակում գործելով անոր վրայ: Հայերը մարերը ջախջախեցին, ձերբակալեցին անոր հրամատար Նիւբարը, տարին Հայաստանի այդ ժամանակուան մայրաքաղաքը՝ Արմաւիր:

Արամ Նահապետ հրապարակաւ դատապարտեց Նիւբարը սպանելով, զայն յանցաւոր գտաւ, որ յարձակէր է Հայաստանի վրայ եւ չարչարէր է հայ ժողովուրդը, որպէսզի բոլորը տեսնեն թէ ինչպէ՛ս կը պատժուին Հայաստանի թշնամիները: Ատկէ ետք Նիւբարի երկիր Մարասանը ի՛նք դարձաւ Հայաստանի հարկատու:

Դրացի Ասորեստանի մէջ այդ ժամանակ գահ կը բարձրանար Բելի ծոռերէն նենգամիտ Նինոսը, որ յաճախ կը յիշէր իր նախնիներէն աժդահայ Բելի սպանութիւնը եւ կը մտադրէր անոր վրէժը լուծել: Ան յարմար առիթի կը սպասէր յարձակելու հայոց վրայ, որպէսզի արմատէն ոչնչացնէ Հայկ Նահապետի յաջորդները:

(Շարունակելի)




ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Պարոյր Սեւակ (Պարոյր Ղազարեան), ծնած է 1924-ին, Վայոց Ձորի Չանգակատուն գիւղը, Հայաստան: Լեզուի եւ գրականութեան հետեւած է Երեւանի եւ Մոսկուայի համալսարաններուն մէջ: Ան հայրենի մեծագոյն բանաստեղծներէն մէկն է: Իր երկերէն յիշենք.

«Մարդը Ափի Մէջ», «Անլռելի Չանգակատուն», «Եղիցի Լոյս», «Այր Մի Մաշտոց Անուն» եւ այլն...

Ան կը մահանայ արկածով 1971-ին:



ՌՈՒԲԷՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Ռուբէն Տէր Մինասեան, ծնած է Ախալքալաք 1882-ին, ուսումը ստացած է Էջմիածինի Գեորգեան եւ Մոսկուայի Լազարեան ճեմարաններուն, ապա ռուսական զինուորական ակադեմիային մէջ:

1915 թ.ին կը վարէ Տարօն գաւառի ինքնապաշտպանական կոչիւները, կարելոր դեր կ'ունենայ Հայաստանի Հանրապետութեան կերտման մէջ ու կ'ըլլայ զինուորական նախարար:

1921 թուականէն ետք կ'ապրի արտասահման ու կը գրէ իր յուշերը հայկական ազգային ազատագրական պայքարի մասին, եօթը հատորով՝ «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» վերնագիրով:

